Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-530[2]-09.02.2009-ԳԲ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալԷ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը (6 դեկտեմբերի 1985 թվական, այսուհետ՝ օրենսգիրք)՝ լրացնել 82.1. և 82.2. հոդվածներով հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 82.1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՆՔԱՆԱՀՍԿՈՒՄ ՉԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ, ԻՆՔՆԱՀՍԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԿԱՄ ԱՌԱՆՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՆՔՆԱՀՍԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ

Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում չիրականացնելը, ինքնահսկման ծրագիրը հաստատման չներկայացնելը կամ առանց հաստատված ծրագրի ինքնահսկում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի չափով:

Նույն խախտումները, որոնք կատարվել են կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հիգհարյուրապատիկի չափով:

ՀՈԴՎԱԾ 82.2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՆՔԱՆԱՀՍԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ ԱՌԱՆՑ ՉԱՓԱԲԵՐՎԱԾ ՍԱՐՔԵՐԻ ՉԱՓՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ, ՉՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԿԱՄ ՉՍԵՐՏԻՖԿԱՑՎԱԾ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ ՉԱՓՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՉԱՓՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ ԿԱՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՁԵՎԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐ ՉՎԱՐԵԼԸ

Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնելիս առանց չափաբերված սարքերի չափումներ իրականացնելը, չհավատարմագրված կամ չսերտիֆիկացված լաբորատորիաներում չափումներ իրականացնելը, սահմանված մեթոդների պահանջների խախտմամբ չափումներ իրականացնելը կամ սահմանված ձևին համապատասխան գրանցամատյաններ չվարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Նույն խախտումները, որոնք կատարվել են կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:Է:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենսգիրքը լրացնել 169.20. և 169.21. հոդվածներով հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 169.20. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՆՔԱՆԱՀՍԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՒՄՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ՎԹԱՐԱՅԻՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԱԿ ՉՊԱՀԵԼԸ, ԱՂՏՈՏՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՎԱՍՏԻ ՏՎՅԱԼՆԵՐ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԿԱՄ ԱՂԱՎԱՂՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնող կազմակերպության կողմից արտադրության ընթացքում օգտագործվող հումքի փոփոխության, արտակարգ և վթարային դեպքերի վերաբերյալ լիազոր մարմնին տեղյակ չպահելը, աղտոտման աղբյուրների ու նմուշառման կետերի քանակի վերաբերյալ հավաստի տվյալներ չներկայացնելը կամ աղավաղված տվյալներ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Նույն խախտումները, որոնք կատարվել են կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:

ՀՈԴՎԱԾ 169.21. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՆՔԱՆԱՀՍԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱՀՍԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՊԱՀՈՎԵԼԸ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼԸ ԿԱՄ ԴՐԱ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնող կազմակերպության կողմից ինքնահսկման արդյունքների մասին տեղեկատվության հասանելիությունը չապահովելը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում չկատարելը կամ դրա վերաբերյալ հաշվետվությունը լիազորված մարմնին չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի չափով:

Նույն խախտումները, որոնք կատարվել են կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի չափով:È:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենսգրքի 242-րդ հոդվածի Ç80.1.-87-րդÈ բառերը փոխարինել Ç80.1.-82-րդ հոդվածներով, 82.1., 82.2. և 83-87-րդ հոդվածներովÈ բառերով և «169.19-րդÈ բառերից հետո լրացնել Ç169.20-րդ և 169.21-րդÈ բառերը:

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	Առաջարկության հեղինակը	Հոդվածը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3	4	4
	Ազգային Ժողովի պատգամավոր Խ. Հարությունյան	Նախագիծ	1. վերնագրից հանել Ç և փոփոխություններÈ բառը:	Չի ընդունվել, քանի որ 3-րդ հոդվածով առաջարկվում է կատարել փոփոխություն
		Հոդված 1-ին	2. 1-ին պարբերությունից հանել «երկուհարյուրապատիկից մինչևÈ բառերը:	Ընդունվել է
			3. 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ նույն խախտումները, որոնք կատարվել են կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:	Ընդունվել է
			4. 6-րդ պարբերությունից հանել «հարյուրհիսունապատիկից մինչևÈ բառերը:	Ընդունվել է
			5. 7-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ նույն խախտումները, որոնք կատարվել են կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:	Ընդունվել է
		Հոդված 2-րդ	6. Վերնագրում Ç169.19 և 162.20È փոխարինել «169.20 և 169.21È:	Ընդունվել է
			7. 2-րդ պարբերությունում «հարյուրապատիկիÈ բառը փոխարինել «երկուհարյուրապատիկիÈ բառով:	Ընդունվել է
			8. 4-րդ պարբերությունում Ç երկուհարյուրա-պատիկիÈ բառը փոխարինել Çչորս-հարյուրապատիկիÈ բառով:	Ընդունվել է
			9. 3-րդ և 7-րդ պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ նույն խախտում-ները, որոնք կատարվել են կրկին՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:	Ընդունվել է
			10. 8-րդ պարբերությունում Ç երկուհարյուրա-պատիկիÈ բառը փոխարինել Çերկու-հարյուրահիսունապատիկիÈ բառով:	Ընդունվել է
		Հոդված 3-րդ	11. 1-ին մասը և Ç169.15È բառը հանել, ավելացնել Ç169.20 և 169.21È:	Ընդունվել է այլ խմբագրությամբ